ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Երևան քաղաքի ավագանու ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցությունը, այսուհետ՝ Խմբակցություն, ստեղծվում է նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը,

1.2 «Մայր Հայաստան» շարժման, «Ինտելեկտուալ Հայաստան» և «Երկիր Ծիրանի» կուսակցությունների կողմից միացյալ ուժերով հիմնադրված «Մայր Հայաստան» դաշինքը 2023 թվականի սեպտեմբերի 17-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքում ստացել է 12 մանդատ: Մանդատ ստացած ավագանու անդամները միասին կազմում են ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցությունը,

1.3 Խմբակցությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներին, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգին, այլ իրավական ակտերին, դաշինքի նախընտրական ծրագրին և սույն կանոնադրությանը համապատասխան:

2. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Խմբակցությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգին, այլ իրավական ակտերին, դաշինքի նախընտրական ծրագրին և սույն կանոնադրությանը համապատասխան,

2.2 Խմբակցությունն իր աշխատանքները կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով, որոնց ընթացքում անցկացվում են քննարկումներ և օրակարգային հարցերի վերաբերյալ կայացվում են որոշումներ,

2.3 Խմբակցության գործունեության հիմնական սկզբունքներն են.

1) ժողովրդավարությունը,
2) բազմակարծությունը,
3) փոխադարձ հարգանքը խմբակցության ներսում,
4) փոխօգնությունը խմբակցության անդամների միջև,
5) հետևողականությունը,
6) մարդակենտրոնությունը,

7) գործունեության թափանցիկությունը,
8) նախաձեռնողականությունը,
9) հաշվետվողականությունը ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ դաշինքին և ՀՀ քաղաքացիներին:

3. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

3.1 ղեկավարում է Խմբակցության գործունեությունը,
3.2 ապահովում է Խմբակցության բնականոն գործունեությունը,
3.3 նախապատրաստում և վարում է Խմբակցության նիստերը,
3.4 կազմում և Խմբակցության անդամների հաստատմանն է ներկայացնում խմբակցության նիստի օրակարգը,
3.5 համակարգում է խմբակցության աշխատանքային խմբերի աշխատանքը,
3.6 Երևանի ավագանիում հարցի քվեարկությունից առաջ անհրաժեշտության դեպքում պահանջում է ընդմիջում՝ մինչև տասնհինգ րոպե տևողությամբ,
3.7 բանակցություններ է վարում Երևանի ավագանու այլ խմբակցությունների և ավագանիների հետ՝ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության նախաձեռնությունները պաշտպանելու և համատեղ քննության առարկա հանդիսացող հարցերին անդրադառնալու համար,
3.8 ներկայացնում է ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության շահերը Երևանի քաղաքապետարանում,
3.9 կազմակերպում և վարում է Խմբակցության փաստաթղթաշրջանառությունը և նամակագրությունը, այդ թվում նաև Խմբակցության նիստերի արձանագրությունների պահպանությունը, կազմակերպում է քաղաքացիների հետ հանդիպումները Խմբակցության ավագանիների և փորձագետների հետ՝ ըստ խմբակցության կողմից սահմանված գրաֆիկի,
3.10 կատարում է Օրենքով և Խմբակցության կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ,
3.11 հաշվետու է Խմբակցությանը և ՀՀ քաղաքացիներին:

4. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

4.1 Խմբակցության ղեկավարի բացակայության ժամանակ փոխարինում է ղեկավարին և օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում գործում ի շահ Խմբակցության,
4.2 Խմբակցության ղեկավարի հանձնարարությամբ կամ գիտությամբ՝ հրավիրում և վարում է Խմբակցության նիստերը,
4.3 նախապատրաստում է Խմբակցության նիստերը,
4.4 վերահսկում է Խմբակցության գործավարությունը,
4.5 կատարում է սույն կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ,
4.6 հաշվետու է ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցությանը և ՀՀ քաղաքացիներին:

5. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ

5.1 իրավունք ունի Խմբակցության նիստում քննարկվող հարցի վերաբերյալ հարցեր տալու, առաջարկություններով և նախաձեռնություններով հանդես գալու, ելույթ ունենալու և իր դիրքորոշումը հայտնելու,

5.2 իրավունք ունի Խմբակցության կամ դրա ղեկավարի որոշմամբ կամ գիտությամբ Խմբակցության անունից արտահայտել դիրքորոշումներ, տալ հարցազրույցներ, վարել բանակցություններ,

5.3 իրավունք ունի Խմբակցության և նրա ղեկավարին՝ ներկայացնել նախագծեր, առաջարկություններ և նախաձեռնություններ,

5.4 իրավունք ունի հաշվետվություն պահանջել Խմբակցության գործունեության մասին,

5.5 իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ՝ Երևանի ավագանու կանոնակարգով, իրավական ակտերով սահմանված կարգով և սույն կանոնադրության համաձայն իրականացնել այլ գործառույթներ,

5.6 մասնակցում է Երևան քաղաքի ավագանու, ավագանու հանձնաժողովների և Խմբակցության նիստերին, իսկ բացակայության դեպքում ՝ այդ մասին նախապես տեղյակ է պահում խմբակցության ղեկավարին, կամ ըստ իրավիճակի՝ քարտուղարին,

5.7 պարտավոր է իր գործունեությամբ ու վարքով բարձր պահել Խմբակցության հեղինակությունը,

5.8 պարտավոր է պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել խմբակցության և Երևանի ավագանու աշխատանքների մասին,

5.9 պարտավոր է ուսումնասիրել քաղաքացիներից ստացված առաջարկությունները և պատասխանել դիմումներին,

5.10 պարտավոր է կատարել ավագանու՝ Օրենքով սահմանված գործառույթները, կանոնադրության պահանջները և Խմբակցության որոշումները,

6. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԸ

6.1 Խմբակցության հերթական նիստերը հրավիրվում են ավագանու նստաշրջանների ընթացքում՝ ամիսը առնվազն մեկ անգամ՝ Խմբակցության ղեկավարի կողմից:

6.2 Խմբակցության ղեկավարի կամ անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող են հրավիրվել նաև Խմբակցության արտահերթ նիստեր,

6.3 Հերթական նիստի անցկացման ժամանակի, վայրի և օրակարգի մասին Խմբակցության անդամները ծանուցվում են հեռախոսազանգի և/կամ կարճ հաղորդագրության և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ նիստից առնվազն 2 օր առաջ,

6.4 Խմբակցության նիստերի անցկացման վայրն է Երևանի քաղաքապետարանի շենքը (Երևան, Արգիշտի 1): Խմբակցության անդամների մեծամասնության համաձայնության դեպքում Խմբակցության նիստը կարող է գումարվել նաև այլ վայրում,

6.5 Խմբակցության նիստը վարում է Խմբակցության ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Խմբակցության քարտուղարը,

6.6 Խմբակցության ղեկավարի և քարտուղարի բացակայության դեպքում նիստը վարում է Խմբակցության տարիքով ավագ անդամը,

6.7 Հրատապ նիստերի անցկացման դեպքում ծանուցումն ապահովվում է առնվազն 1 ժամ առաջ՝ էլեկտրոնային փոստի և/կամ հեռախոսազանգի միջոցով,

6.8 Խմբակցության նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Խմբակցության անդամների կեսից ավելին,

6.9 Խմբակցության նիստում կարող է քննարկվել Երևանի ավագանու իրավասություններին, գործունեության և լիազորություններին վերաբերող ցանկացած հարց,

6.10 Խմբակցության նիստի օրակարգում ընդգրկված հարցերը քննարկվում են հետևյալ ընթացակարգով.

1) օրակարգի հաստատում,
2) քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցողի ելույթը,
3) հարցեր զեկուցողին,
4) մտքերի փոխանակություն,
5) քվեարկություն,

6.11 Նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է այդ հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո: Խմբակցության նիստում որոշումներն ընդունվում են, եթե դրանց կողմ են քվեարկել նիստին ներկա Խմբակցության անդամների կեսից ավելին: Քվեարկության արդյունքում ձայները հավասար բաշխվելու դեպքում վճռորոշ է համարվում նիստը վարողի դիրքորոշումը,

6.12 Նիստի արձանագրությունը, որը ներառում է Խմբակցության նիստում քննարկված բոլոր հարցերի քվեարկությունների անհատական արդյունքները, ստորագրում են նիստի մասնակից Խմբակցության անդամները: Քվեարկությունն ընթանում է բաց ընթացակարգով: Հատուկ դեպքերում կարող է լինել փակ քվեարկություն: Փակ քվեարկություն անցկացնելու որոշումը կայացվում է բաց քվեարկության միջոցով,

6.13 Խմբակցության ղեկավարի կամ մեկ երրորդի առաջարկությամբ նիստին կարող են մասնակցել նաև քննարկվող հարցերին իրազեկ անձինք կամ մասնագետներ,

6.14 Խմբակցության նիստին կարող է մասնակցել նաև Խմբակցության փորձագետը, ով ներկայացնում է իր ուսումնասիրություններն ու փորձագիտական եզրակացությունները:

6.15 Խմբակցության նիստին մասնակցում է Խմբակցության գործավարը, ով սղագրում է նիստը և ապահովում նիստի կազմակերպման տեխնիկական մասը:

7. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Խմբակցության կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Խմբակցության ղեկավարի կամ անդամի առաջարկությամբ՝ Խմբակցության անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ,

7.2 Խմբակցության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները Խմբակցության նիստում քննարկվում են արտահերթ,

7.3 Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: